

տրի»։ Յետ երկար հարցափորձի, երբ հայ նախարարները յանձն կ'առնեն պարսկական կրօնքը ընդունիլ, թաղաւորը ժամանակ կ'որոշէ՝ որմէ ետք պէտք էին տարուան մը ընթացքին Հայաստանի մէջ պարսկական կրօնքը տարածել. «Կէտ եղեալ զժամանակն զամիսն վեցերորդ տաղնապէին եւ ստիպէին արքունի հրամանաւ մինչեւ ի նաւասարդէ նաւասարդ»։ Երբ մոգերը Հայաստան կը հասնին «յամսեանն չորրորդի», քսանհինգ օր ետք կը լրանայ պայմանաժամը, ուստի «Մոգպետն ինքնին մոգօք հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ քակել զգրունս եկեղեցւոյն յաւուր միաշարաքին»¹⁵։ Պայմանաժամը, ինչպէս ըսուեցաւ Նաւասարդ ամիսն էր, որ այդ տարին Կիրակի մը հանդիպած է, ինչպէս վերջին վկայութենէն կը հետեւի։ Արդ այս զուգադիպումը՝ տոմարական հաշիւներու համաձայն՝ պէտք էր տեղի ունեցած ըլլար 450ի Օգոստոս 6ին։ Անկէ շուրջ վեց ամիս առաջ նախարարներու Տիգրոն ժամանումն էր, այսինքն 450ի Զատիկի նախորդ օրը, որ հանդիպած է Ապրիլ 15ին (Զատիկը նոյն տարին Ապրիլ 16ին էր)։ Եւ ըստ հայկական տոմարին՝ Ահեկան ամիսի 14։ Ասկէ հաշուելով չորրորդ ամիսը պիտի ըլլայ Հրոտից տասը, մոգերու Հայաստան մեկնումի թուականը, եւ անկէ քսան հինգ օր ետք՝ Նաւասարդ մէկը, այն է վեցերորդ ամիսը, որ իբր պայմանաժամ որոշուեցաւ Յաղկերտի կողմէն։ Այս բոլորէն կը հետեւցնենք թէ նախարարներու Տիգրոն ժամանումը տեղի ունեցած է 450ի Զատիկի նախօրեակին, այն է Ապրիլ 15ին. այս թուականը, Եղիշէի վկայութեամբ՝ Յաղկերտ թաղաւորի ժի. (տասներկորդ) տարին էր. ուստի առաջին տարին պէտք է հաշուել 438 Օգոստոս

տոս չորսէն սկսելով: Նոյնը կը փաստուի նաեւ Ղեւոնդեանց նահատակութեան թրւականով, որ թէ՛ Եղիշէ եւ թէ՛ Ղ. Փարսկեցի կը նշեն Յազկերտի ԺԶ. (տասնըկէցերորդ) տարին Հրոտից Իե (25ին): Այդօրը, ըստ Ասողիկի վկայութեան, Կիրակի մը եղած է: Ասկէ դիւրին է դտնել Ղեւոնդեանց նահատակութեան բուն թուականը, որ է 454ի Յունիս 25, որ իրապէս Կիրակի մըն է: Այս թուականն ալ Յազկերտի ԺԶ. տարին բերելու համար՝ հարկ է սկսիլ 438 Օգոստոսէն:

Եզրակացնելով կ'ըսենք թէ Եղիշէ, Ղ. Փարպեցի եւ Մ. Խորենացի Յաղկերտի դահակալութեան թուականը դործածած են պաշտօնական հաշիւով, այսինքն նոյն տարուան տոմարի սկիզբէն հաշուելով, երբ Յաղկերտ դահ բարձրացած էր, այն է 438ի Օգոստոս չորսը: Ուստի երկու վերջին հեղինակներու վկայութիւնը ճիշտ է երբ Ս. Սահակի մահուան համար կը գրեն. «Ի սկզբան ամի երկրորդի՝ Յաղկերտի, որդւոյ Վռամայ» այն է 439 Սեպտ. 7: Մինչդեռ Կորիւն պէտք է նշուածի առաձ ըլլայ՝ Յաղկերտի դահ բարձրանալուն իրական տարին, որ մեր կարծիքով պատահած պիտի ըլլայ 439 Օգոստոսէն առաջ (Ա. կէսին մէջ). ուստի անոր վկայութիւնն ալ ճիշտ է երբ կը գրէ թէ՛ Սահակի մահուան համար եւ թէ՛ Մաշտոցին «յառաջնում ամի՝ երկրորդ Յաղկերտի, որդւոյ Վռամայ (այն է 439 Սեպտ. 7 եւ 440 Փետր. 17), որոնք պաշտօնական հաշիւով Յաղկերտի երկրորդ տարուան ընթացքին կը հանդիպին. բայց Կորիւն՝ որ իր գերբը կը գրէր Յաղկերտի դահ բարձրացած տարին, իրեն համար իրականին մէջ այդ տարին առաջինը կը նկատէր:

Հ. ՊՕԴՈՍ ԱՆԱՆԵԱՆ

(Tup. 16)

15. Եղիշէ, Պատմութիւն, էջ 33, 77, 93/4, 104, 105:

ԴԱՆԻԷԼ ՎՐԴ.Ի ԱՍՈՐԻՈՅ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱԻԹԻ

(Շարք. տեղ. «Բազմալեզու» 1968, ք. 4-6, էջ 104)

३०.

ՔԱՆԻ ՄԸ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ԴԱՆԻԷԼԻ
ՄԵԿՆՈՒԹԵՆԷՆ՝ ԻՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Դիւրին ձեռնարկ էր Դանիէլի համար՝
բացատրել հարիւր յիսուն Սաղմոսներ,
որոնք որքան պատմական հիմ մը ունին,
սակայն նոյնչափ եւ աւելի մարդարէա-
կան դուշախուժիւններ են, կատարուելիք
փրկապորժուութեան խորհուրդին մասին,
աղերսական երգերու եւ աղօթքներու ձե-
ւին ներքեւ :

Ահա՛ թէ ինչպէս կ'արտայայտուի Ի. Սաղմոսի մեկնութեան մէջ, խօսքը ուղղելով Յովհաննէս Վարդապետին. «Յիշէ՛ յով Հայր Հոգեւոր, ինչ որ ըսի քեզի՛ Սաղմոսներու մեկնութեան դեռ չճշմանարկած. նպատակս չէ Սաղմոսին ամէն խօսքերը մեկնել, որովհետեւ կան կէտեր՝ ուր կ'աղօթէ Դաւիթ, կան ալ տեղեր՝ ուր իր փրկութեան պատմութիւնը կ'ընէ, երբեմն ալ վարդապետութիւն կ'աւանդէ ժողովուրդին: Քսաներորդ այս Սաղմոսով ինծի կը թուի՝ թէ Դաւիթ կ'աղօթէ ո՛չ իր անձին, այլ իր Սողոմոն որդիին համար, որքան հասկցանք ուրիշներու պատմութենէն, թէ կ'աղօթէր ու խորհուրդ կու տար՝ Աստուծոյ փրկութիւն փնտռել՝ թշնամիներու ձեռքէն, ո՛չ թէ զէնքով, կարօքով եւ երկմարներով»:

ԼԳ. Սաղմոսի մեկնութեան սկիզբը կը

յայտնէ թէ ինչո՞ւ կը ստիպուի կարճ
բռնել իր դրութիւնը. «Շէթ բոլոր Սաղ-
մոսներուն իմաստներուն խորութեան
համաձայն, կ'ըսէ, ընդարձակէի խօսքս,
մինչեւ հիմա կարող չէի ըլլար առաջին
Սաղմոսին վերջաւորութեան հասնիլ...
Եւ որովհետեւ ըմբռնեցի թէ Ս. Հոգիին
ըսած այս պատգամները չէի կրնար պար-
զել անձիս տկարութեան պատճառով,
տեսներով նաեւ թէ շատեր աշխատու-
թեամբ ու ջանքով չէ որ կը փնտռեն ըմ-
բռնել իմաստներուն խորութիւնը, որ այս
սուրբ երգերուն մէջ ծածկուած են, ուս-
տի կարճ ոճով կը բացատրեմ, որպէս զի
ընթերցողը գիւրջաւ հասկնայ խորհուր-
դին ոյժը»:

ԻԱ. Սաղմոսին մեկնութիւնն ալ հետեւեալ խօսքով կը վերջացնէ. «Եթէ Սաղմոսի մեկնութիւնը կարգացողներէն մէկը համարի ոչ թէ ինչպէս որ զրուած է մեզմէ, այլ միայն Դաւիթ թագաւորի համար ըսուած կարծէ, կամ ո՛չ թէ ինչպէս մեզի երեւցաւ Ս. Հոգիին շնորհքով, որ իր սիրելիներուն կը յայտնէ ծածկուած խորութիւնները՝ այնպիսին դիտնայ թէ մարգարէին խօսքն ալ ոչ թէ հոգեւոր, այլ մարմնաւոր կը համարի, եւ հոգիին աւելի բան մը խորհիլ չի տար, բայց միայն նիւթական լսածը»: ՃԱ. Սաղմոսին սկզբնաւորութեան ալ նման ակնարկ մը ունի. սակայն կ'անցնիմ այժմ յատուկ դասաւորումով ներկայացնել նախ իր վարդապետական կարծիքները:

Խորհուրդ սուրբ Երրորդութեան. Մեկ-նելով ԼԳ. Սաղմոսին «Բանիւ Տեառն երկինք հաստատեցան, եւ հողուով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նորա» համարը, կ'ըսէ. «Լուսաւոր կերպով յայտնեց սուրբ Երրորդութեան երեք անձնաւորութեան խորհուրդը. Բանիւ Տեառն ըսելով, տուաւ Հօր՝ Տէրութեան անունը, Որդւոյ՝ Բանին անունը, եւ Հոգւոյն սրբոյ՝ ամէն զօրութիւնքը, ինչ որ հեռու չէ Յովհաննէս աւետարանչին գրածէն, եթէ «Ի սկզբանէ էր Բանն» եւն., ոչ ալ տարբեր՝ Պօղոսի Կողոսացիներուն գրածէն, եթէ «ամենայն ինչ ի ձեռն նորա, եւ նովաւ եղեւ, եւ նա է նախ քան զամենայն եւ ամենայն ինչ նովաւ կեայ»: Ասով կը սորվինք, կը յաւելու, «Թէ մի եւ նոյն հօգին է որ ազգեց առաքեալներուն եւ մարդարէններուն մէջ, եւ զեղեցկապէս յայտնուեցաւ եւ բացատրուեցաւ հոս Ս. Երրորդութիւնը»:

Հրեշտակներու ստեղծումը. «Հուր յերեսաց նորա բորբոքեցաւ, եւ կայծակունք հատան ի նմանէ», ԺԲ. Սաղմոսին այս համարով՝ կը բացատրէ հրեշտակներուն ստեղծումը, գոյութիւնը, դասակարգութիւնը, գիտութիւնը, պաշտօնը, եւ թէ իրարմէ կը սորվին...: Իսկ յաջորդ համարները մեկնելով, «խաւարին ջուրք մինչեւ յամբս օդոց» եւն., կ'ըսէ. «Ջուր կոչէ զամենայն վերին զօրութիւնսն՝ վասն պատրաստ ժողովութեանն եւ միաբանութեանն ի հաւասար միակամութեանն զոր անձնիշխան կամօք ստացան ի կալն իւրեանց առաջի աստուածութեանն. եւ ամբ թեթեւ օդոց անուանէ զնոսա՝ վասն թեթեւ արագութեանն եւ հանապազմութիւն լինելոյ ընդ ամենայն կողմանս»: Եւստի կը հարցնէ. «զի՞նչ են զործելոց վերին զօրքն ի վախճանի աշխարհիս, կամ ո՞րպէս երեւիցին, կամ ո՞ւր նմանութիւններ գտնելով՝ կը հետեւցնէ թէ աշխարհի վերջը, Որդւոյն Աստուծոյ գալստեամբ, պիտի տեսնուին հիմունք

աշխարհի, աշխիւքն մեղաւորներուն բոլոր ծածուկ գործերը»:

Անմահութիւն հոգւոյ. ՃԴ. Սաղմոսին «Հանես զոգի ի նոցանէ եւ մեռանին եւ ի հող դառնան» համարը առիթ կուտայ ապացուցանելու հոգւոյ անմահութիւնը. «Վասն աշտորիկ պահի անմահութեամբ, մինչեւ առաքի դառնալ զգեցնուլ զմարմին ուստի առաւ. զի անհնարին էր մահու տիրել հոգւոյ, եւ քանզի յԱստուծոյ աւանդի, եւ ի տեղի՝ յորում վայելեն բնութեան նորա՝ հանգչի, ոչ խրախճանալով ի բարիսն որ պահեալ կան սրբոյն՝ յետ յարութեանն, եւ ոչ հողիք մեղաւորացն տանջեալ նախ քան զկատարած»:

Եկեղեցի. Եղեկիէլ մարդարէի վրայ դուրստով կը սկսի ԶԷ. Սաղմոսին մեկնութիւնը, համաձայնութիւն գտնելով Դաւիթի «Հիմունք նորա ի լեռն սուրբ նորա» համարին մէջ. որովհետեւ Եղեկիէլ կը նկարագրէ Աստուծոյ տաճարին, դռներուն, կամարներուն, պատուհաններուն եւ աստիճաններուն մանրամասն չափերը, իսկ Դաւիթ՝ հիմը միայն կը յիշէ, եւ Պօղոս առաքեալի «ամենայն տուն կազմի յումէ կազմի... որոյ տունն մեք իսկ եմք» բացատրութեամբ կը հաստատէ Եկեղեցւոյ հիմնարկութիւնը:

Ապաշխարութիւն. ԾԱ. Սաղմոսին վերջաւորութեան, համեմատելով Սաւուղի եւ Դաւիթի մեղաները, կը գրէ. Թող լսեն անոնք որ Աստուծոյ արդարութեան դէմ կ'արտայայտուին ըսելով, ինչո՞ւ Դաւիթը երեսէ չգրկեց՝ երբ մեղանչեց, եւ չեն սորվիր անոր ապաշխարութենէն՝ թէ ինչպէս ընդունելի եղաւ առ Աստուած դարձը. որպէս զի ամէն անոնք որ նոյնպիսի մեղքով կ'իյնան, արցունք թափեն եւ թողութիւն խնդրեն Դաւիթի նման, արժանի ըլլալու թողութեան: Սաւուղ ալ ըսաւ՝ մեղայ որ արհամարհեցի Աստուծոյ խօսքը, եւ լսեց Սամուէլի բերնէն՝ թէ Տէրն ալ քեզ արհամարհեց թաղաւորութենէդ. մինչ Դաւիթի մեղան լսելով պատասխանեց՝ թէ Տէրը ներեց մեղքդ:

Աստուած անոնց միտքը տեսաւ ու դատեց. ներեց մէկուն որ բոլոր սրտով կը զղջար, արհամարհեց միւսը, որովհետեւ մեղքին մէջ մնաց ու չապաշխարեց:

Սուրբ Հաղորդութիւն. Դ. Սաղմոսին «Ի պողոյ ցորենոյ, դինուոյ, ձիթոյ» համարի մեկնութեան, կ'ըսէ, թէ Աստուծոյ բարութիւնը լիացուց մեզ, տալով իր Եկեղեցիին փոխանակ ցորենի՝ իր մարմինը, եւ դինի՝ իր պատուական արիւնը, եւ ձէթի փոխարէն՝ միւրթարիչ իր Հօգին բաշխեց՝ օծումն անապականութեան. Եւ չնորձ որդեգրութեան: Եւ մեկնելով ԻԳ. Սաղմոսի «Պատրաստ արարեր առաջի իմ սեղան» համարը, կը կրկնէ լսելով՝ թէ «խորհրդական սեղան տնօրէնութեան փրկչին պատրաստեցաւ յԵկեղեցւոյ... եւ զի մի սեղան ասաց եւ ոչ բազում, առ ի նշանակել եթէ մի է սեղան Եկեղեցւոյ եւ ոչ բաժանեալ. զի թէպէտեւ յամենայն աշխարհի է, սակայն մի սեղան է կենաց»:

Նկարագրութիւն վերջին դատաստանի. Ծ. Սաղմոսի մեկնութեան մէջ կ'ըսէ. «Ոչ թէ լուծեամբ եւ խոնարհութեամբ պիտի ըլլայ Գրիստոսի գալուստը, այլ փառքով եւ փողերու ձայնով վերին զօրութիւններու. նման Երիքովի շուրջը դարձող տապանակի փողերուն... եւ երկնային զօրութեանց զօրիւնով կը կործանի աշխարհ իր շինութեանց պարիսպաներով, կը բացուին երկրիս հիմքեր եւ կը ցամաքին ծովու ջուրերը, որոնց փոխարէն կրակի բորբոքած գետեր կը բարձրանան եւ փայլակներէ աւելի այրող թեթեւ լեզուներ՝ ապականելու բոլոր երկրքը»: Կը յիշէ Դանիէլի տեսիլքը վերջին դատաստանին եւ Եսայիի մարգարէութիւնը:

Նկարագրութիւն դժոխքի տանջանքներուն. ԽԹ. Սաղմոսի մեկնութեան մէջ, գուցէ հետեւելով Պօղոս առաքեալի անկանոն գիրքի տեսիլքին, կը գրէ. «Արեւն արեւ սպանողները մարդասպան դեւաւորութեան կը մատնուին, եւ որովհետեւ սպանութիւնը հետեւանք է նախանձի կամ ատելութեան, այնպիսիները նախանձոտ

եւ ատեցող դեւերու կը մատնուին, որոնք սուրերու եւ գեղարդներու կերպարանքով անողորմ անոնց դէմ կը փայլին... իսկ հայհոյիչները՝ հետեւող բարկութեան, անոնք ալ հայհոյիչ սատանաներու ձեռքը կ'իյնան: Չար խորհրդատուները եւ ուսուցիչներն ալ գերեզմանի մէջ թաղուածներու նման՝ կը մնան դժոխքի խորքը, ուսկից ազատուալ չկայ...:

Յախտեմակամութիւն դժոխքի տանջանքներուն. Մեկնելով ԿԵ. Սաղմոսի «Առ քեզ ամենայն մարմին եկեացէ» խօսքը, կ'ըսէ. «Ոմանք առանց իմաստութեան կը համարին թէ տանջանքներուն կատարածը, աշխիւքն վերջաւորութիւն պիտի ըլլայ, իբր թէ ամէն մէկ յանցանքի հատուցումը վճարելէ ետք, դատաւորը պիտի կոչէ «ամենայն մարմին եկեացէ». եւ թեթեւամիտ կ'անուանէ այնպիսիները, որոնք կը մոռնան աւետարանին պատգամը թէ «եկեացէ ժամանակ, յորժամ ամենեքին որ ի գերեզմանս կայցեն՝ եկեացեն արտաքս... որոց զբարիս գործեալ է՝ ի յարութիւն կենաց, եւ որոց զչարս՝ ի յարութիւն դատաստանաց: Եւ նոյն դադափարը կը կրկնէ ԶԲ. Սաղմոսին մեկնութեան՝ թէ զբարբառս զայս «զի դու ժառանգեսցես զհեթանոսս» թոյլ եւ անմիտ ոմանք համարեցան թէ տանջանքներուն վերջը կը խոստանայ: Դարձեալ ՃԴ. Սաղմոսի մեկնութեան մէջ կ'ըսէ. «Ոչ ի սպառ բարկանայ Տէր, եւ ոչ յաւիտեան պահէ ոխս». շատ տեսակ բացատրութիւններ տուին եւ չեղեցան ճշմարիտ ճամբայէն եւ ինկան, կարծելով թէ՝ մկրտութենէ ետք՝ դատաստանի չեն ենթարկուիր, որչափ ալ մեղանչեն, եւ թէ Աստուծով զղեցած չընորձը չեն կրնար մեղքերը մերկայցնել:

Յիսուսի մահով արդար հոգիներու ազատութիւնը. Հետաքրքրական է ԶԶ. Սաղմոսին «Փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց» համարին մեկնութիւնը: Կը գիմէ Պետրոս առաքեալի կաթողիկէ նամակին «որով եւ ողուցն որ ի բանտին՝ երթեալ քարոզեաց երբեմն ապստամբե-

սոյնպէս եւ հաւատքն Հնդկաց առաւել
զովի քան զամենայն ազգաց»:

Սաբա Բաղաթ. Մեկնելով Թ. Սաղմոսին «Պատրաստ արար զաթոռ ի դատաստանի» եւն. համարը կը դրէ. Յայտնի է որ Աղբարյազարու յաղթութեան համար չէ որ ըսուած է, կամ Սաբայի համար թէ աւերակ դարձուց եւ կորսուեցաւ անոնց յիշատակը. որովհետեւ մինչեւ այսօր կանգուն է քաղաքը:

Սիւն. «Ի Սիւնէ պսակ վայելչութեան Աստուած երեւցոյց» (Սղմ. Ծ). «Ոմանք կ'ըսեն թէ, կը մեկնէ Դանիէլ, այս պսակը փշապսակն է որ Աստուծոյ գլուխը անցուց, եւ չ'ընդունիր անոնց կարծիքը, եւ երեք տեսակ Սիւն կը դնէ. մին՝ ինչ որ մարդարէնները նկարագրած են, որ խաչահան եւ սպանող եղաւ Աստուծոյ որդիին, եւ անոր համար է որ իմանուէլ ըսաւ. «Երուսաղէմ, Երուսաղէմ...: Երկրորդը՝ Եկեղեցին, որ Աստուծոյ ձեռքով հիմնուեցաւ: Երրորդը՝ ճշմարիտ Սիւն, այն որ կայ եւ կը մնայ յաւիտեան, քաղաք թաղաւորին մեծի, ուր են սուրբերը եւ հրեշտակներու գունդերը...»:

Եփրեմի ապստամբութեան պատճառը՝ Հէ. Սաղմոսին մէկ համարն է, ուր կ'ըսուի. «Որդիք Եփրեմի լիազորիկը եւ պընդածիւղք, յաւուր պատերազմի կապարճա դարձուցին»։ մեկնելով կ'ըսէ. «Ասոնք հակառակեցան Մովսէսի՝ անապատի մէջ եւ կ'ըսէին. եկէք իշխաններ անուանենք մեզի եւ Եփրատոս դառնանք. այս բանը կ'ըսէին, որովհետեւ անոնց մայրը Եփրատոսէն էր, եւ ուրիշ շատեր եփրատացիներէն կ'ին առած էին, որոնք միշտ կը զրգոէին Եփրատոս վերադառնալ: Եփրեմի ցեղը ստէպ կը շնորհէր պատուիրաններէն եւ ինքնահաճոյ մտքով հակառակ կեցան ոչ միայն Մովսէսի, այլ եւ Յեսուի՝ երբ երկիրը կը բաժնէր. ասոնք միայն աւելի ընդարձակ հող պահանջեցին բաշխողէն:

Հեղեղատ Կիսովմի. ԶԳ. Սաղմոսին «Երկուքն ազգն էին ի հեղեղատին Կիսովմի» խօսքերը մեկնելով կ'ըսէ. «Քանանացիք եւ Մադիանացիք, որոնք մեռան

ու կորսուեցան, ինչպէս կ'ըսէ մարգարէն... «Եւ եղեն որպէս զաղը երկրի»: Օրինակ է ասիկա, կ'ըսէ, երկրի մեղքերուն եւ կը թարգմանուի երկիր աղբոյ, և ճշմարտապէս յաղը եւ ի դայոս դարձան նիւթք մեղաց:

Բաղնեա իշխան – Կեդար. ՃԺԹ. Սաղմոսին մէջ կը յիշուին երկու անունները, որոնց համար կ'ըսէ. «Որք ի լեզու երբայեցուց հմուտք են, ասեն՝ թէ սաղմոսս այս վասն Բաղնեա իշխանի է ասացեալ, յորժամ առաքեաց ինքն եւ ընկերք իւր ի վերայ Եդրայ, սպանանել նենդութեամբ զնա:

Կեդար յերրայեցուց լեզու խաւար թարգմանի:

Սղմ. ՃԵ-ՃԸ. Քնար եւ տաւիղ. «Զարթիր քնար իմ, զարթիր տաւիղ եւ քնար»: Կը մեկնէ. «Երկրցս անդամ ասէ զբանս արթնութեան, եւ յիշէ զքնար եւ զտաւիղս, եւ երկոքեան սոքա երգարանք են. զի տաւիղ այն ասի որ ի մեռելոտի ազեացն կազմի, որով ընտրէր զձայնս երգոց իւրոց... եւ քնար՝ զձայնն որ ելանէ ի բերանոյն գուշակէ...:

Զոպա. Քանի մը բոյսերու եւ կենդանիներու մասին իր գրածները Օգտակար են. ԾԱ. Սաղմոսին «Յօղեա յիս մշտկաւ եւ սուրբ եղէց» համարով՝ կը բացատրէ թէ ինչ էր մշտիկ (սրսկելու կապոց) զոպան. «Զոպայն մի էր ի սրբիչ փայտիցն՝ որք ընտրեցան օրինօքն, զոր առնոյր քահանայն յորժամ սրբէր զպղծեալն: Եւ զարձեալ, յորժամ զոհէին զպատարան, հրամայէր օրինադիրն զի առցեն զսղոցուքն զոպային եւ թացցեն յարեան գառինն, եւ սրսկեացեն ի վերայ սեմոցն եւ բարաւորաց զբանցն յորս բնակիցեն: Եւ զարձեալ, յորժամ սրբէր քահանայն ըզտունն յորս լինէր արածն բորոտութեան, առնոյր զոպայն հանդերձ մայր (փիճի) փայտիւ՝ առ ի սրբել զտունն: Նաեւ ինքն զոպայն բնութեամբ ջերմ է եւ սրբիչ, եւ օգնէ որոց տաղնապին ի հովութենէ եւ ի սպիտակ մաղասաց, եւ որոց թանձրացեալ լինին ստամոքսն՝ յորժամ դնի ի վի-

րայ զոպայն՝ հանդերձ այլովք զեղովք, զիւրաւ լուծանէ զցաւսն. օգնէ եւ ի վերայ մարմնոյ, սրբէ եւ մաքրէ զցաւս երեսաց, յորժամ խառնի ի նիւթս լուսեաց երեսաց»¹:

Խորիսիս. Մեկնելով «Քաղցր են բանքք ի քիմս իմ, առաւել քան զմեղր բերանոյ» սաղմոսը, կ'ըսէ. Երբ Յիսուս յարութենէ ետք, փակ դռներէն մտաւ վերնատուն, առաքեալներէ ուտելու բան մը կը խնդրէ...: Հրաշքով պատրաստուեցաւ խորիսիսը, նիսան ամսուան մէջ խորիսիս չկար, սակայն ինչ որ վերնատան մէջ կը կատարուէր՝ քաղցր էր, խօսքն ալ իր խորհրդաւորութեամբ:

Օղիի կամ ցֆիի բժշկական օգտակարութիւնը կը բացատրէ ԿԹ. Սաղմոսին «Զինէն խորհէին ոյք նստէին առ դրունս, զի այսն առնէին ոյք ըմպէին զօղի» համարով նախ կ'իմանանք որ «օղին» գինի արմաւենեացն է. սա յորժամ ձմիւր բազում քաղցրութիւն ունի, եւ մաքրէ զստամոքս որովայնին, եւ նրբէ զբարբառս, եւ սրբէ զցաւս թոքոց, եւ օգնէ լերդին յառաւելութենէ թանձրութեան արեան, եւ իջուցանէ զմաղձ եւ զմաղաս ի ստամոքսն, եւ հանգուցանէ զվերին մասունս գլխոյն եւ հանգարտեցուցանէ զուղեղն»:

Մանանային համար մեկնիչը կը համարի տեսակ մը ցօղ, որ զանազան ձեւերով կ'իջնէ ծառերու վրայ. եւ ամպերով ծովէն կու գայ, երկինքէն չ'իջներ: Հէ. Սաղմոսին «Հրաման ետ ամպոց ի վերուստ, եւ զդրունս երկնից երաց, եւ տեղեաց ի նոսա մանանայ կերակուր», խօսքն է որ կը մեկնէ. «Այս ցօղը տարբեր իրերու կը փոխուի զանազան տեղեր. երբեմն կը թանձրանայ եւ մեղմ կը դառնայ, երբեմն ալ ծառերու ուտին կը փոխարկուի. ուրիշ տեղ՝ անուշահոտ խունկ, կամ ծառերու վրայ իջնելով՝ կը կարծրանայ, եւ արցունքի կը նմանի, նոյն իսկ բեհեզի նման բուրդի պէս կը խտանայ, եւ ուր որ ձիթենիներ կան վաշտիւն աճեցնելու ձեւով ծլելով՝ կ'իջնէ անոնց վրայ, եւ մեղրի ախորժելի համն

ունի»: Պէտք է չ'իտթիլ մաննայ = նըւէր, ընծայ, պատարագ բառի հետ:

Սարոյ. «Անդ թոռունք երկնից բոյնս զիցեն եւ արագիլ եզ զբոյն իւր ի սարոյս» ՃԴ: Սաղմոսին այս համարը բացատրած ատեն, Արագիլի կամ Տառեղի մասին տուած մեկնութեան մէջ, ընդարձակ կը խօսի այս ծառի վրայ. Սարոյն բնութեամբ անուշահոտ է եւ փայտը՝ կարծր. չի փտիր եւ որդերէ չի փճանար, ու շատ կը վայելէ զեղեցիկ քանդակներու եւ տաճարներու դռները զարդարելու»: Պտուղն ալ բժշկական տեսակէտով օգտակար է...: Այս Սաղմոսին «Յագեցին ծառն Տեառն, եւ մայրքն Լիբանանու զորս գու տնկեցեր: Անդ թոռունք երկնից ձագս հանցեն եւ բոյն արագիլի ապաւէն է նոցա», համարի մասին կը գրէ Յովհ. Արթինեան. «Հոս երբայեքն բջրոշիմ (նոճեր) բառը Եօթանասունք սխալ հասկցած են, նոյնպէս նաեւ Վուլկանը՝ թարգմանելով «տուն արագիլի առաջնորդ է նոցա», իսկ հայերէն՝ «բոյն արագիլի ապաւէն է նոցա»: Ասորերէն հնագոյն թարգմանութիւնը հաւանաբար ուղիղ էր եւ անշուշտ սարոյ բառն ունէր, վասն զի Դանիէլ վարդապետ Ասորի՝ իր մեկնութեան մէջ կը գրէ. «Սարոյն բնութեամբ անուշահոտ է... պտուղն ալ օգտակար, եփելով եւ ուտելով ծիրանեղոյն եւ զեղին երեսներու կ'օգնէ, եւ ջուրը մաղասի զեղնութիւնը կը մաքրէ... զարձեալ, այս ծառը արմատէն մինչեւ զազաթը շատ մը ճիւղեր ունի, որով զիւրին է մինչեւ ծայրը բարձրանալ»: (Յ. Արթինեան – Աստուածաշունչի տունկերը – Կ. Պոլիս, 1913, էջ 99-110) ²:

1. Սարգիս վարդապետ Յովհաննու Կաթ. Ա. Թուղթին մեկնութեան մէջ կը գրէ. «Եւ ընդէ՞ր զօպայիւ, վասնզի ջերմին է բոյսն այն, եւ զարձեալ զի խիտ է եւ ուռուցուկ». յայտնի նմանութիւն կայ Դանիէլի մեկնութեան հետ:

2. Ստեփանոս ԼԵՀ. Սարոյն կը համարի բեհեզի տեսակ մը, եւ վկայութիւն կը բերէ «Սարոյի պտուղն ի դեղս մտանէ, եւ փոխանակ խնկոյ ծխի»:

Անիւ. Մեկնելով ԶԳ. Սաղմոսին «Արա
զնոսա որպէս զանիւ, որպէս զեղէզն ա-
ռաջի հողմոյ» համարը, կը բացատրէ
հետեւեալ կերպով. «Այս անիւը այն է որ
սպիտակ փուշերու ծայրը կը բռնանի, եւ
երբ փուշերուն հունտը հասուննայ, հո-
ւը կը տանի անիւը եւ թոյլ չի տար որ
հանգչի, նոյն խիւ երբ անիւին մը նստի,
բայց եթէ մէկը զայն բռնելու ըլլայ»³:

ՂԵԼԱՌ. ԻԳ. 40. Հագնի (Յոր. Խ. 17).
Յունական ձեռագիրներ Codex Alexan-
drinus A. Codex Bezae D կը գտնեն աղ-
նու, ինչ որ ցոյց կու տայ թէ հայերէն
Աստուածաշունչը թարգմանուած է այս
ձեռագիրներու վրայէն:

Հերմի - Աղոցի (Դանիէլ) այնպիսի
ճարտարութեամբ հայացուցած են և ներ-
դաշնակ՝ որ կարելի չէ չսքանչանալ
թարգմանիչ հայերերուն վրայ, անմասն
վարպետներ, որոնց ամբողջ երկը գլուխ
գործոց մըն է:

Եղջերու. Հետաքրքրական է թռչնադ-
ղիններու եւ քանի մը կենդանիներու վրայ
տուած տեղեկութիւնները. Սաղմոս ԺԸ.
«Հաստատեցեր զոտս իմ որպէս զեղջե-
րուի, եւ ի վերայ բարձանց կացուցեր»
համարը այսպէս կը մեկնէ. «Եղջերուին
բնութիւնը ինչպէս որ կը կոխկռտէ եւ կը
սպառէ օձերը, այսպէս ալ Աստուած իր
առաքեալներուն զօրութիւն շնորհեց կո-
խելու օձերու եւ կարիճներու եւ թշնա-
միին ոյժերուն վրայ. որովհետեւ ինքն
ալ ոտքի տակ առաւ սաղմոսին ըսածին
համաձայն՝ առիւծը եւ վիշապը»:

ԽԲ. Սաղմոսի մեկնութեան մէջ ալ
«Որպէս փափաքէ եղջերու յաղբերս
ջուրց» խօսքերը կը մեկնէ ու կը հարցնէ,
ինչ է եղջերուի այս օրինակը. կը բա-
ցատրէ. «Վասն զի այս անասունը բնու-
թեամբ թշնամի է օձերու, եւ անոնց ե-
տեւէն կը վազէ ուր որ գտնէ, իր բերնի
չունչով անոր ոյժը կը մարէ, եւ յետոյ
վրան կոխելով կտոր կտոր կ'ընէ: Իսկ ե-
թէ օձը ծակ մը գտնէ ու մտնէ՝ կը փու-
թայ ջուրի ընթացքի մը եւ բերանը լե-
ցուցած կը թափէ վրան, որպէս զի ելլէ

եւ սատկեցնէ: Ընդհակառակն, երբ օձը
գետնի տակ պահուածով՝ եղջերուն կը
սկսի դառնորէն դռնել՝ թշնամին որսալ
չկարենալուն համար»⁴:

Միեղջերու. Միեղջերուի ուրիշ մէկ
յատկութեան վրայ կը խօսի ՂԲ. Սաղ-
մոսին «Բարձր արարեր որպէս զմիեղջե-
րուի զեղջիւր իմ» համարը մեկնելով.
«Եթէ միեղջերուն փոքր է եւ մէկ եղջիւր
միայն ունի, որսորդները չեն համարձա-
կիր անոր մօտենալ. իսկ երբ լեռներու
դաղաթը զինք նեղելու ըլլան, լեռան բար-
ձունքէն վար կը նետուի եւ եղջիւրին վը-
րայ կը կանգնի եւ չի յաղթուիր»:

Փիւնիկ որ եւ Արմաւ հաւ. Հետաքրք-
րական է ԻԲ. Սաղմոսի մեկնութեան
մէջ «Ես որդն եմ, եւ ոչ մարդ» համա-
րը՝ հետեւեալ նմանութեամբ բացատրել.
կը հարցնէ, «Ո՞ր որդն է որ կը բռնանի ա-
ռանց ամուսնութեան. կայ հաւ մը որ
փիւնիկ կը կոչուի, որուն համար կ'ըսեն
թէ մինչեւ հինգ հարիւր տարի կ'ապրի,
եւ հնդիկներու աշխարհը կը գտնուի: Երբ
մահը մերձեանայ, կու գայ Հելիոպոլիս
(Եղիպտոս), ուր քահանան զինք տեսնե-
լուն՝ կը հասկնայ միտքը: Անկէ Լիբա-
նան կ'երթայ եւ անուշահոտ ծաղիկներ
ժողովելով կը լեցնէ թեւերը: Երբ վերա-
դառնայ, քահանան կը պատրաստէ բա-
զինը (կուռքի սեղանը), որ թատուկի
ճիւղեր զնելով վրան, եւ հաւը տեսնելով
որ պատրաստ է սեղանը, թեւերը կը բա-
խէ. ջերմութենէն կրակ կ'առնէ թէ՛ սե-
ղանը եւ թէ՛ թռչունը. եւ քահանան քըն-
նելով հաւուն մոխրը՝ կը գտնէ որդեր,
իսկ երկրորդ օրը կատարեալ փիւնիկ՝
նման առաջինին, որ յարգանքի ցոյցեր
ընելէ ետք քահանային՝ կ'երթայ իր տե-
ղը»⁵:

3. «Անիւ կոչի փուշն, որ ի ծայրս կառնին ի չո-
րանալն անկանի». Վարդան Վրդ. Մեկնութիւն
Ծննդոց:

4. «Արձեամն տեսանող եւ եղջերու օձահալած». Սարգիս Վրդ. Մեկ. Կաթ. Թղ. Պետր. Ա:

5. Ինքն իսկ յինքնէն ծախեալ եւ ծնեալ փիւնիկն
հաւ, որ է արմաւ. Տօնակ. Արմաւ նոյն է ի

Արծիւ. Նման մեկնութիւն մ'ալ կը
գտնենք ԶԳ. Սաղմոսին «Նորողեսցի որ-
պէս զարծուոյ մանկութիւն քո» համա-
րին, ուր կը հարցնէ թէ ինչու արծուի
նորողութեան կը նմանցնէ սուրբ մկրդ-
ութիւնը. կը պատասխանէ: Թռչուննե-
րու բնութիւնը ուսումնասիրողներ կ'ը-
սեն թէ արծիւը այնքան բարձր կը վե-
րանայ որ մինչեւ եթերը կը հասնի, ո-
րու ջերմութիւնը թոյլ չի տար թռչուն-
ներուն աւելի բարձրանալ. արծիւն ալ կը
զգուշանայ անցնիլ սահմանը, եւ այն ա-
տեն միայն հոն կը վերանայ, երբ ծերա-
ցած՝ կը կարօտի նորողութիւն, դադրելով
աշխատանքէ, ու բոյնը դառնալով կը
դարմանէ ձաղերը, եւ փետուրները թա-
փելով չի կրնար թռչիլ: Իր ձաղերուն
խնամքով՝ ժամանակէ մը ետք, նորափե-
տուր կը զարգարուի եւ առաջինին նման
թեւեր բռնանելով՝ բոյնէն կը վերանայ կը
բարձրանայ մինչեւ որ արեւու ճառա-
գայթեհուն ջերմութեամբ հին փետուր-
ները այրին եւ զգայ թէ հինէն մաս մնա-
ցած չէ. կը դիտէ բարձունքէն թէ ուր
ջուրի աղբիւր կայ. կ'իջնէ եւ երեք ան-
գամ կ'ընկղմի. երրորդին կը թափին հին
փետուրներուն մնացորդներն ալ որ այ-
րած էին, ու նորօգուտի կ'ըլլայ մա-
նուկ եւ կը վերանայ ջուրէն»:

Հաւալաւն. «Նմանեցայ ես հաւալաւն
յանապատի, եղէ ես որպէս բույս յաւերա-
կի» ԶԲ. Սաղմոսի. այս համարը՝ առիթ
կու տայ ըսելու թէ «հաւալուսը բոլոր
կեանքը անապատի մէջ կ'անցընէ, որով-
հետեւ կը սիրէ առանձնութիւնը եւ ան-
բնակ տեղեր. զիչե՛րը միայն կը թռչի,

եւ ո՛չ օրուան մէջ, որովհետեւ արեւու
լոյսը թոյլ չի տար որ տեսնէ: Շատ որ-
դեսէր է. երբ ձաղերը մեծնան, կը սկսին
մաղցիլ երեսը՝ մինչեւ փետուրներէն
մերկանայ, այնքան որ համբերութիւնը
հասնելով մէկիկ մէկիկ կը մեռցնէ. ո-
րու համար սաստիկ վշտանալով կը սկսի
իր կողերը խոցել, ուսկից ելած արիւնը
եւ ջուրը ձաղերուն վրայ կը սրսկէ եւ կը
կենդանանան ու դարձեալ կը սիրէ ու կը
խնամէ զանոնք»⁶:

Ճննդուկ. Շարունակելով վերոյիշեալ
Սաղմոսը, «Տընեցայ եւ եղէ ես որպէս
ճննդուկ միայն ի տանիս», կ'ըսէ. «Նման
ճննդուկի որ տանիք կը բարձրանայ ու
դառնորէն կը ճչէ, կը թռչի, իմացնելու
համար թէ իր բոյնը օձ մտած է: Իսկ
Լամբրոնացին կը ստուգաբանէ. «Ճընճ-
դուկն միշտ ի ճռուողել կայ, յորմէ եւ
զանունս ստացաւ. Առակ եւ Սղմ.»:

Տառեղն. Մեկնելով ԶԳ. Սաղմոսին
«Անդ թռչունը երկնից բոյնս դիցեն եւ
արագիւ եզ զբոյն իւր ի սարոյս» համա-
րը, կը հարցնէ թէ ինչ ըսենք պիղծ տա-
ռեղին (արագիւ, ճայ) համար, որ իր
բոյնը ծառերու բարձունքին վրայ կը դնէ
նման միւս թռչուններու: Այս թռչունը
ճանչցողները կ'ըսեն թէ զգուշի է հոտը,
զարչելի սողուններ կ'ուտէ եւ կը կերցնէ
իր ձաղերուն, եւ բոյնէն դարձահոտու-
թիւն կը բուրէ. միսը ուտելի չէ⁷:

Ագռաւ. Առասպել մըն ալ կը պատմէ
ձԽԶ. Սաղմոսին այս խօսքերու մասին.
«տայ անասնոց զկերակուր իւրեանց, ձա-
գուց ագռաւուց՝ որ կարգան առ նա»:

ճախել եւ ի ծնանել, նշանակ է Տեառն, զի նոյն
է նախ քան զհարչարանս, եւ զինի չարչարա-
նաց. Միսթար Գօշ. Առակ. ԶԾԱ:

6. Վարդան Վրդ. Մեկն. Սղմ. «Ասեն զհաւա-
լուսն որդեսէր, մինչ չեթալ ի բունոյն բե-
րել որս, եւ ի նեղել ձաղուցն՝ սպանանէ կըտ-
ցով եւ ապա հանէ արիւն ի լանջացն, եւ առ-
ցով ջուր ի բերանն, եւ սրսկէ. յետ երեք ա-
ւուր կենդանանան»:

7. Մի յազգէ ճայից կարկաչողաց. «Բնաբար ի
բարան ունելով զարդարութիւն տառեղն, որ

զճերպեալ ծնողն կերակրեն». Սանահն:
Որ եւ ճայ տալ, այլ ի մեզ թարգմանի եւ
արագիւ. «Յորս որջանան թռչունք, որոց տա-
ռեղանն բոյն առաջնորդէ...». Նիսասցի Գր.
Երդ:

ճայ. ուրուր կամ որոր, ցին. «Ջրու եւ
զճայ եւ զարագիւ». Օր. ԺԳ. 15, որ ի ՂԵԼԱՌ.
ԺԱ 16 ասի որոր. ազգ ագռաւու, ազգ
արագիւ, որ առանձին խնամ տանի ծնողին.
«Նախահողակը եւ ծնողասէրը որպէս զճայ եւ
զարագիւ». Վարդան. ծն:

կ'ըսեն թէ ազգաւները առանց մերձաւորութեան կը ծնանին իրենց ձաղերը եւ ձաղերը չեն խնամեր, որովհետեւ դաժանահոտ են, եւ միեղներու երամներ կը նստին անոնց վրայ, ու կը մտնեն անոնց բերանը, որպէսզի կլլեն եւ ապրին. եւ հայրերնին չեն կերակրեր՝ երբ իրենց դիմելու ըլլան:

Տարալի. ԶԳ. Սաղմոսին «Բանդի ճնճղուկ եզիտ իւր տուն, եւ տատրակ դրոյն՝ ուր դիցէ դձագոս իւր» համարը՝ առիթ կու տայ Դանիէլ վարդապետի, իր մեկնութեան աւելցնելու, «Թռչուններու ցեղին մէջ գովեստի արժանի է տատրակը, վասն զի կ'ըսուի թէ երբ ասոնցմէ մէկը մեռնի, ո'չ արուն եւ ո'չ էգը ալ եւս ամուսնութեան ընկեր կը փնտռեն, ալ սրբութեամբ կ'ապրին մինչեւ վերջ... իրարու հետ չեն կուտիր, եւ խումբեր չեն կազմեր. սովորութիւն ունին զոյգ զոյգ թռչելու. ամբիժ ու խաղաղ են: Սովոր են ձմեռ եղանակին խոնկերու գաւառները գաղթել, եւ գարնան կը վերադառնան անուշահոտ թեւերով, եւ նոյն ատեն ձագ կ'ունենան»⁸:

Մարախ. ձԹ. Սաղմոսով է որ մեկնութեանս հեղինակը՝ մարախի վրայ իր քաղած տեղեկութիւնը կու տայ մեզի. «Թօթափեցայ որպէս մարախ» խօսքը բացատրելով, կ'ըսէ. «Ինչպէս որ մարախը կը թօթափէ եւ հողի տակ կը ծածկէ իր սերմը, եւ ծնանիլը չի տեսներ, այսպէս ալ ժողովուրդը»: Իսկ ձԳ. Սաղմոսի «եկն մարախ եւ խառնիճ» համարը բացատրելով կ'ըսէ թէ «Մովսէս մեղի չըսաւ թէ ինչ է խառնիճը. թեւաւոր օձի տեսակ մը կը համարի»: Հայկազեան բառարանը կը գրէ. Մարախի մանր տեսակ, խաբազուլ, ջորեակ, հետեւելով Վարդան վարդապետի:

Գայլ. ԽԹ. Սաղմոսով կու տայ նաեւ գայլի նկարագրութիւնը՝ ոչխարներու հօտին մէջ. «Յետ այսորիկ բերանովք իւրեանց արածեսցին» համարը կը մեկնէ. «Դաւիթ կ'աղլարարէ հեթանոսներու ոչխարին չնմանիլ. որովհետեւ սովորու-

թիւն է ոչխարին՝ երբ դայլը մտնելով հօտին մէջ հատ մը յափշտակէ, կը զարհուրին ու կը հաւաքուին հովիւին քով. սակայն երբ հեռանայ դադանը եւ խածուած ոչխարներուն բառաչիւնը դադրի, կը բանան բերաննին եւ կ'որոճան իրենց բերնին խոտը, իբր թէ բան մը պատահած չըլլար»:

Հայկ. ԶԹ. Սաղմոսին «Աթոռ նորա որպէս արեգակն առաջի իմ, որպէս լուսին՝ զի հաստատեալ է յաւիտեան վկայ հաւատարիմ յերկինս» համարը առիթ կու տայ որ Դանիէլ պարզէ իր ժամանակի աստեղագիտական ուսումը. «Ոչ արեգակ եւ ոչ լուսին միայն, այլ եւ հայկն, եւ բազմաստեղն եւ զիշերաւարն եւ այլ մօլոր աստեղքն՝ յորժամ չըջին ի հանապազօրդ շուրջանակի հաստատութեանն, եւ սկսանին ի տարւոյն եւ կատարին առանց խտորման»:

Արեւ. «Զլոյս եւ զարեւ դու հաստատեցեր» ՀԳ. Սաղմոսի բացատրութեան մէջ կ'ըսէ. «Զոր օրինակ եւ լոյսն որ եղեւ ի սկզբանն, զերիս աւուրս համասփիւռ տարածեալ եւ առանց չինուածոյ էր, եւ յորժամ հրամայեաց Աստուած եւ եղեւ արեգակն յաւուրն չորրորդի, ժողովեցաւ լոյսն սփռեալ եւ հեղական առ բոլորումն արեգական»: Այս կարծիքին հետեւելով է որ մեր Շնորհալին չորրորդ օրուան արարչութեան իր երգով, գրած է. «Լոյսն այն պայծառ՝ յօր չորրորդին յարեգական նիւթ հաւաքեալ»:

Լուսին. Կը վերադառնայ Դանիէլ արեւու եւ լուսնի վրայ իր գիտցածը կրկնելու եւ անով ձԹ. Սաղմոսին «Արեգակն ի տուէ քեզ մի մեղիցէ, եւ մի՛ լուսինն ի զիշերի» խօսքը մեկնելու, հետեւեալ ձեւով. «Ըստ այսմ օրինակի զփորձիչն նոյնդունակ եւ լուսինն նշանակէ. առաջին՝ վասն ջերմութեան, եւ երկրորդ՝ վասն

8. Անապատասէր իմն է կենդանիդ, եւ ի բազմաց միարանութենէ եւ ի խառնից խոյս տայ, սըրբասէր է հաւն այն, ըստ նմանութեան ամուսնասէր տատրակի:

փոփոխմանց. զի զոր օրինակ լուսինն կատարեալ եւ լի ստեղծաւ յԱստուծոյ լուսով, եւ յետ լրման պակասեաց եւ ապա սպառեցաւ»:

Ամալֆ. Տարտամ եւ անորոշ է նոյնպէս ձԼԳ. Սաղմոսի մեկնութիւնը. «Հանէ լիւր անձրեւս արար, եւ հանէ զհողմ ի շտեմարանաց իւրոց» համարը, երբ կը գրէ. «Սուղ ինչ մեք քննեսցուք զամենայն, եթէ զինչ է պատճառս որ ի ծագաց երկրէ ելանեն ամպք, կամ թէ զինչ է բնութիւնս ամպոյ... վասն զի յօգոց եւ ջրոց գոյանան բնութիւնք ամպոյ, արտաքոյ երկրի եւ ի ծագս սահմանաց ցամաքոյ, զի օդք որ ի վերայ ծովու են յորժամ հնչէ ի նմա հողմ, թանձրանայ եւ կցի փոքր ինչ ի նրբութենէ իւրմէ, եւ հրամանաւն Աստուծոյ բառնան զջուրն ի ծովէ եւ ելանեն ի ծագաց յերկրէ եւ բարձրանան ի վերին ծագս օդոց, եւ հրեղէն փայլատակմունք ըստ նմանութեան ջրըհոսից հանեն զջուրն եւ լնուն զծոցս ամ-

պոց, եւ յայնժամ թեթեւընթաց զօրութեամբն սփռեն զնոսա փայլատակմունք ի վերայ երկրի հրամանաւն Աստուծոյ»:

Կը փակեմ ծաղկաքաղս նմոյշ մ'ալ աւելցնելով Դանիէլ Վ.ի եւ իր ժամանակի բժշկական գիտութեան, մեկնելով «Դաւիթ արքայ ծերացեալ եւ անցեալ էր զաւուրբք» բացատրութիւնը, որուն պատճառը փնտելով կը հետեւցնէ. «Զոր օրինակ ջերմին առնէ ծաղր եւ տապացունէ զարիւն սրտի եւ պարարտացուցանէ բոլորովիմք զփորոտիսն, եւ բորբոքէ ուրախութեամբ զհողմ լեարդին եւ երիկամանցն, սոյնպէս ցրտացուցանէ տըրտմութիւն զջերմութիւն արեան սրտին, եւ փոփոխէ զնա ի պաղումն եւ ի թանձրութիւն եւ զառազաստ սրտին որ է պայծառ եւ սպիտակ, փոփոխեցէ զնա տըրտմութիւն ի դոյնս կապուտակս եւ մթինս... (Սղմ. ձԳ):

Հ. ՔԵՐՈՐԵՒ Ա. ԶՐԱՔԵԱՆ

(Շար. 8)